ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «07» 08 2020թ № 982-Ա

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԱՆՎԱՎՈՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՆՎԱՎՈՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԵՎ (ԿԱՄ) ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՕՐԻՆԱԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԱԳՐԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՅԴ ԿԱՐԳԱԴՐԱԳՐԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՏՐՎՈՂ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ, «ԱՆՎԱՎՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄՄ ՏԿ 018/2011 ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԻՊԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ (ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ (ՇԱՍՍԻԻ) ՏԻՊԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇՆԵՐԻ ՏՊԱԳՐՄԱՆ ՈՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անվավոր փոխադրամիջոցների և անվավոր փոխադրամիջոցների վրա տեղադրվող և (կամ) օգտագործվող սարքավորումների ու մասերի համար միօրինակ տեխնիկական կարգադրագրերի ընդունման մասին և այդ կարգադրագրերի հիման վրա տրվող հաստատումների փոխադարձաբար ճանաչման պայմանների մասին» 1958

թվականի մարտի 20-ին Ժնևում ստորագրված համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի N 1211 - Ա որոշման 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը.

հրամայում եմ.

1. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությանը ճանաչել լիազորված մարմին՝

1) Հայաստանի Հանրապետությունում Համաձայնագրով նախատեսված վարչական (ադմինիստրատիվ) մարմնի գործառույթները՝ տեսակի հաստատման տրամադրման և դրանց փոխադարձ ճանաչման համար,

2) Համաձայնագրով նախատեսված տեխնիկական ծառայություններ իրականացնելու համար նշանակման գործառույթներ,

3) «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներն իրականացնելու նպատակով սերտիֆիկացման մարմնի կողմից տրվող տրանսպորտային միջոցի տիպի հավանության (ամրաշրջանակի (շասսիի) տիպի հավանության) փաստաթղթի հաստատման, գրանցման գործընթացի ապահովման համար,

4) ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության գնահատման փաստաթղթերի միասնական ձևանմուշների տպագրման ու համապատասխանության գնահատման մարմիններին տրամադրման, համապատասխանության գնահատման փաստաթղթերի միասնական ռեեստրի վարման գործընթացի ապահովման համար:

2. Սույն հրամանի ընդունումից հետո «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ապահովել.

1) Համաձայնագրով նախատեսված տեսակի հաստատման գործընթացը,

2) «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներն իրականացնելու նպատակով սերտիֆիկացման մարմնի կողմից տրվող տրանսպորտային միջոցի տիպի հավանության (ամրաշրջանակի (շասսիի) տիպի հավանության)

փաստաթղթերի հաստատման, գրանցման և այդ փաստաթղթերի ռեեստրի վարման գործընթացը,

3) ՄՄ ՏԿ 018/2011 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության գնահատման փաստաթղթերի միասնական ձևանմուշների տպագրումը ու համապատասխանության գնահատման մարմիններին տրամադրումը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ